2· Այբէն մինչեւ ի Քէն Քրիստոս մեղայ քեզ·
Բազում խռովութեանց հետեւեցայ ես...

Ձեռ.: Մեր Մատենադարանի թ. 797, 195բ (= 2· կ. 288ա): — Աճառեան՝ Ցուց. Թաւրիզի, էջ 61:

3· Այբէն մինչեւ ի Քէն գովեցի զքեզ,
Այբէն մինչեւ ի Քէն եղբայր մեղայ քեզ...

Ձեռ.: թ. 797, 196ա (= 2· կ. 289բ):

4· Այբէն մինչեւ ի գիրն վերջին մեղայ ասեմ ես Քրիստոսին.
Բազում բանիւ խռովութեանց հետեւեցաք ի հետ չարին...

Ձեռ.: թ. 797, 197բ (= 2· կ. 292ա):

5· Այս սուտ կենցաղոյս վերայ ես միայն շուտով խաբեցայ.
Թողի զկամքն աստուածային, բանսարկուին ես հետեւեցայ...

Ձեռ.: թ. 797, 200բ (= 2 կ. 296ա):

6· Աստուած, Հայր երկնաւոր զքէն գոհանամ, Տէր.
Որ դու զօրացուցեր ըղքո ծառայն Տէր...

Ձեռ.: թ. 797, 190բ (= 2· կ. 279բ): — թ. 344, 220ա:

Հրտ.: Հայոց Նոր Վկաներ, էջ 396—400 (մեր թ. 344էն):

7· Հայաստանեայց հաղար թըվին, եւ տասնուվեց աւելորդին,
Քաջ նահատակ մի ընտրեցաւ, աստուածաշէն կաթայ քաղքին...

Ձեռ.: թ. 797, 70բ (= 2· կ. 109ա): — թ. 344, 213ա:

Հրտ.: Հայոց Նոր Վկաներ, էջ 401—408 (Էջմիածնի խանգարեալ ձեռագիրներէն):

8· Մէկ մարդ մի ճրագ վառեր,
Բարձր ի տեղ դրեր...

Հրտ.: Մասեաց Աղաւնի 1863, էջ 264—265:

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

1. FRÉDÉRIC MACLER: Autour de l'Arménie. Paris, E. Nourry, 1917, p. XVI, 326. Գին՝ 4·— Ֆր.:

Հեղինակն ամփոփած է հոս ի մի իւր զանազան հայագիտական յօդուածներն, որոնք այլեւայլ ժամանակներ լոյս տեսած են պարբերական հրատարակութեանց մէջ։ Անոնք իրենց թարմ բովանդակութեամբ միշտ հետաքրքրական են եւ ուրախութեամբ միայն կրնանք ողջունել հեղինակին գաղափարն, որ խորհած է մէկ հատորի մէջ դիւրամատչելի ընել զանոնք ամէն անոնց, որոնք արեւելեան՝ յատկապէս հայկական խնդիրներով կը հետաքրքրուին։ Եւ իրօք ալ ժամանակ մը (1917) երբ հայկ· հարցն այնպէս կը զբաղցնէր ամբողջ աշխարհ, անշահաբեր չէին կրնար համարուիլ այն յօդուածներն, որոնց նպատակն էր ծանօթացնել Հայաստան եւ հայկական հարցն գաղղիերէնախօս ժողովուրդներուն։

Հատորիս մէջ ամփոփուած են հետեւեալ գրութիւնները.

1. La chaire d'arménien à l'École Nationale et spéciale des langues orientales vivantes (1912), p. 1—65.

2. La question arménienne et la Constitution nationale en Turquie, 1860—1910 (1915), p. 66—81.

3. Les Arméniens en Turquie (1913), p. 82—168.

4. Arménie et Turquie (1913), p. 169—176.

5. Les origines du mouvement arménien I (1915), p. 177—247.

6. Նոյնն II (1917), p. 248—275.

7. L'extermination d'un peuple (1915), p. 276—285.

8. Les Jeunes-Turcs et l'Arménie (un point acquis), p. 286—326.

Նոր է միայն վերջին հատուածը։ Մատենին սկիզբը "ծանուցում" մը (p. III—XVI) կը մատնանշէ մատենագիտական տեղեկութիւններ Հայաստանի եւ հայկ· հարցի վերաբերեալ հրատարակութեանց մասին, որոնք դիւրաւ մատչելի կրնան ըլլալ գաղղիերէնախօս ժողովրդոց, եթէ աւելի մեծ փափագին հայկական հարցին մէջ։ Հետաքրքրական է այս մասն ալ։

Հ. Ն. Ա.

digitised by